ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով կահույքի ձեռքբերման նպատակով ձևավորված ՀՀՔԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-Կ-19/1 ծածկագրով արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հիմքով պայմանավորված մեկ անձից գնումների կատարման նպատակով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 17.09.2019թ. ժամը 10-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Կ.Հովհաննիսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ. Մկրտչյանը, Գ.Սեփոյանը, Մ.Անտոյան, Է.Արշակյանը և քարտուղար Ռ. Խաչատրյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-Կ-19/1» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«Էլյասիկ» ՍՊԸ (ք. Երևան, Իսակովի պող,22/12)**
2. **«Արգավանդ Կահույք» ՍՊԸ (ՀՀ ք.Երևան, Անդրանիկի 129, բն. 4)**

Համաձայն՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 71-րդ կետի 1-ին մասի ա) պարբերության հրավերը էլեկտրոնային եղանակով միաժամանակյա ծանուցմամբ ուղարկվել է մասնակիցներին:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ՝**«Էլյասիկ» ՍՊԸ**-ի

Մասնակցի կողմից ներկայացված հայտի Հավելված 1-ում՝ (դիմում-հայտարարություն ընթացակարգին մասնակցելու) հայտարարությունում մասնակցի կողմից (ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը) դաշտում լրացվել է իրական շահառուի անուն, ազգանուն, հայրանունը, չի պահպանվել հրավերի 7.9 պահանջները:

Հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ գնահատման գործընթացը կասեցնել մեկ աշխատանքային օրով:

Հաջորդ նիստը հրավիրել **18.09.2019թ. ժամը 14:00**-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Կ.Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Մկրտչյան

_____ Գ.Սեփոյան

_____ Մ.Անտոյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ. Խաչատրյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով կահույքի ձեռքբերման նպատակով ձևավորված ՀՀՔԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-Կ-19/1 ծածկագրով արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հիմքով պայմանավորված մեկ անձից գնումների կատարման նպատակով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 18.09.2019թ. ժամը 14-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Կ.Հովհաննիսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ. Մկրտչյանը, Գ.Սեփոյանը, Մ.Անտոյան, Է.Արշակյանը և քարտուղար Ռ. Խաչատրյանը:

Օրակարգ

Անհամապատասխանության շտկման վերաբերյալ

«Էլյասիկ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում կատարել է համապատասխան շտկում՝ Հավելված 1-ում:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը

Հ/Հ	Անվանում	Քանակ	Նախահաշվային գին	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/	
				«Էլյասիկ» ՍՊԸ	**«Արգավանդ Կահույք» ՍՊԸ**
1	Բազկաթոռներ	2	250000	125000	131650
2	Փոքր բազմոցներ	1	300000	207500	140825
3	Գրասեղաններ	1	390000	325000	408325*

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել,

   1,3 չափաբաժինների համար **«Էլյասիկ» ՍՊԸ**-ին:

   2 չափաբաժնի համար **«Արգավանդ Կահույք» ՍՊԸ**-ին

2. Ընթացակարգի **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել,

   1 չափաբաժնի համար **«Արգավանդ Կահույք» ՍՊԸ**-ին

   2 չափաբաժնի համար **«Էլյասիկ» ՍՊԸ**-ին

*__«Արգավանդ Կահույք» ՍՊԸ__-ի կողմից ներկայացրած 3 չափաբաժնի գնային առաջարկը գերազանցում է այդ գնումը կատարելու համար սահմանված նախահաշվային գինը:

2.Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն փաստաթղթի ստացումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, 12.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Կ.Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Մկրտչյան

_____ Գ.Սեփոյան

_____ Մ.Անտոյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ. Խաչատրյան